# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**15 փետրվարի 2017 թվականի N 24-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, 5-րդ մասի, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2017 թվականի փետրվարի 8-ի N 86-Ա որոշումը՝* **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի փետրվարի 10-ի *<<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 250 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>>* N 37-Ա որոշմամբ հաստատված NN 1-39 հավելվածների *(ծածկագրեր՝ 66-2.3-(33-36), 66-3.2-(38-41), 66-4.1-(44-74))* 10-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

***<<4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն և բնակիչների անապահովության գնահատման <<Նպաստ>>, սոցիալական դեպքի վարման, սոցիալական բնակարանային ֆոնդի կացարանների, բնակելի տարածության կարիք ունեցող անձանց ցուցակների հաշվառման և համապատասխան հերթացուցակի ձևավորման, համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգերով աշխատելու կարողություններ.>>:***

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

**2017 թվականի փետրվարի 15**
**ք. Հրազդան**